

ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ՝ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

Վեհափառ Տեր,

Երեսուն տարիներու Ձեր գահակալությամբ, որ կիանդիսավորվի այս տարի, փառավորեցիք մեր Սուրբ Եկեղեցվո և ժողովուրդի մեծ առաքյալին և լուսավորչին պանծալի Աթոռը Հայրապետական: Նորոգեցիք և վարդարեցիք մեր ապգին քրիստոնեական պատմության և վարգացման սկզբնատեղի Ս. Էջմիածինը, ուրկե «Լույսի Հորմեն աստվածեղեն լույսը ծագեցավ» հաշխարհ Հայաստան: Բովանդակ հայության Մայրավանքը վերակերտնեցիք հուրախություն և ի մխիթարություն հայկական սերունդներու:

Վստահաբար արդար հպարտությամբ կդիտեք Ձեր բազմամյա աշխատության և նրբաճաշակ ընտրողության արգասիքները: Վերանորոգեցիք վանքեր և հուշարձաններ մեր պանծալի Հայրենիքի հողին վրա՝ կապելով մեր անցյալը ապագային: Մայր Հայաստանի և հայ ժողովուրդի վերակենցաղումի վերջին քառասնամյա շրջանին երեք տասնամյակներուն ընթացքին Աստուծո շնորհիվ մեր ժողովուրդը բախտավորվեցավ Ձեզ նման առաջնորդ և հովվապետ մը ունենալով ի գլուխ իր Եկեղեցվո բանավոր հոտին:

Անձամբ կատարված Ձեր բազմաթիվ ուղևորություններով այցի ելաք զանազան երկիրներու մեջ բնակավորված հայկական համայնքներուն և անոնց աչքերը դարձուցիք իրենց լույսի մոր Հայաստանյայց Եկեղեցվո հինավուրց կեդրոնին և անոնց հոգիները վառեցիք սիրովը իրենց մայր հողին, որուն վրա կծլի և կծաղկի դեպի պայծառ հորիզոններ ընթացող մեր ժողովուրդի մայր զանգվածը իր բնիկ ղեկավարության առաջնորդությամբ:

Մեր Եկեղեցին և մեր ապգը իշխանական վայելչությամբ ներկայացուցիք շատ մը երկիրներու և ժողովուրդներու ղեկավարներուն և ներկայացուցիչներուն մոտ: Հարատևորեն Ձեր ձայնը միացուցիք աշխարհի խաղաղության և ժողովուրդներու բարեկամության նվիրական դատին ջատագով հանդիսացող բազմապգի երևելի անձնավորությանց ձայնին, որ արձագանքն է համայն մարդկության ամենախոր տենչանքին:

Խառնելով իմ ձայնը բյուրավոր ապգակիցներուս ձայնին՝ կմաղթեմ սըրտանց, որ Տերը բազում գալիք տարիներով կՁեզ շնորհե մեր Եկեղեցիին և ժողովուրդին՝ պահելով Ձեր առողջությունն ու կորովը արթուն և արդյունավետ:

Մնամ ջերմ սիրով և անկեղծ մեծարանքով

Խոնարհ աղոթակից Տեառնդ:

ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ

4 սեպտեմբեր 1985 թ.